ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՀՀՀ-ՄԱԾՁԲ-22/80-Պ

ք. Երևան 16 նոյեմբերի 2022թ.

«Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետ՝ Պատվիրատու), ի դեմս գործադիր տնօրեն Հովհաննես Մովսիսյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մի կողմից, և

«Բեգրաունդ փրոդաքշն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (այսուհետ՝ Կատարող), ի դեմս տնօրեն Վազգեն Պողոսյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից,

(այսուհետ յուրաքանչյուրն առանձին՝ Կողմ, միասին՝ Կողմեր),

ստորագրեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԿԵՏԸ

1.1. Սույն Պայմանագրով Կատարողը պարտավորվում է Պատվիրատուին մատուցել «Մանկական Եվրատեսիլ 2022» երգի միջազգային մրցույթի (այսուհետ՝ Մրցույթ) շրջանակներում Մարզահամերգային համալիրի տարածքի բրենդավորման, դրա տպագրման, տարածման/տեղաբաշխման և ապամոնտաժման ծառայությունները (այսուհետ՝ Ծառայություններ) սույն Պայմանագրով նախատեսված ծավալով և պայմաններին համապատասխան, իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել մատուցված Ծառայությունները և վճարել դրանց համար սույն Պայմանագրով սահմանված չափով և ժամկետում:

1.2. Կողմերն արձանագրում են, որ տպագրության, տեղաբաշխման և ապամոնտաժման ծառայությունների նկարագիրը հաստատվում է համաձայն Հավելված 1-ի, իսկ բրենդավորման գաղափարը, դրա վերջնական տեսքը և նկարագիրը հաստատվում է ըստ Պայմանագրի Հավելված 2-ի: Ընդ որում, Կողմերն արձանագրում են, որ Պատվիրատուի ցուցումով, կամ կողմերի փոխադարձ Համաձայնությամբ հնարավոր են բրենդավորման՝ Հավելված 2-ով նախատեսված էսքիզներում որոշակի փոփոխություններ, որոնք չեն կարող հանգեցնել Պայմանագրով սահմանված արժեքի փոփոխության: Բրենդավորման վերջնական էսքիզը Կատարողը ներկայացնում է հանձնման-ընդունման ակտի հետ միաժամանակ:

1.3. Ծառայությունները մատուցվում են Պայմանագրի կնքման օրվանից մինչև 2022 թվականի դեկտեմբերի 14-ը ներառյալ: Ընդ որում, Կողմերն արձանագրում են, որ բրենդավորման տպագրությունը, դրա տեղաբաշխումը/տեղադրումը իրականացվում է Կատարողի կողմից ամբողջ ծավալով մինչև 2022 թվականի դեկտեմբերի 08-ը ներառյալ, իսկ դրանց ապամոնտաժումը՝ Միջոցառման ավարտից հետո մինչև 2022 թվականի դեկտեմբերի 14-ը ներառյալ:

1.4. Կողմերն արձանագրում են, որ սույն պայմանագրով նախատեսված Ծառայությունների մատուցումը չի հանգեցնում Կատարողին՝ Միջոցառման, վերջինիս կարգախոսի նկատմամբ իրավունքների փոխանցման, և որ Կատարողը իրավունք չունի օգտագործել այն, ինչպես նաև դրա հիման վրա ստեղծված բրենդավորումը այլ՝ Պայմանագրով չնախատեսված նպատակներով, ինչպես նաև տրամադրել այլ անձանց: Բրենդավորման նկատմամբ բոլոր բացառիկ գույքային իրավունքները փոխանցվում են Պատվիրատուին հանձնման-ընդունման ակտի երկկողմանի ստորագրման պահից:

1.5. Կողմերը երաշխավորում և հավաստում են, որ իրավասու են ստորագրելու սույն Պայմանագիրը և ունեն սույն Պայմանագիրը կատարելու համար բոլոր անհրաժեշտ իրավունքները, թույլտվությունները և համաձայնությունները:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. ***Պատվիրատուն իրավունք ունի՝***

2.1.1. Կատարողից պահանջել սույն Պայմանագրով նախատեսված Ծառայությունները մատուցել ամբողջությամբ, պատշաճ որակով և սահմանված ժամկետներում,

2.1.2. Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող Ծառայությունների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը՝ պահանջել Կատարողից տրամադրել Ծառայությունների մատուցման ընթացքի դրանց արդյունքի վերաբերյալ Պատվիրատուին հետաքրքրող տեղեկատվությունը,

2.1.3. Սույն Պայմանագրով իր ակնկալած արդյունքին հասնելու նպատակով Կատարողին տալ Ծառայությունների մատուցմանը վերաբերելի ողջամիտ ցուցումներ,

2.1.4. Պահանջել Կատարողից ամբողջությամբ հատուցել Ծառայությունների մատուցման կապակցությամբ Պատվիրատուին պատճառված վնասները:

2.2. Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1. Կատարողին ապահովել սույն Պայմանագրով սահմանված Ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ բոլոր պայմաններով, այդ թվում, ըստ Կատարողի կողմից նախապես տրամադրված տեղեկատվության ապահովել Կատարողի ներկայացուցիչներին Ծառայությունների մատուցման նպատակով Ծառայությունների մատուցման տարածք մուտք գործելու հնարավորություն, տրամադրել ողջամտության սահմաններում Ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ տեղեկատվություն և այլն,

2.2.2. Ընդունել սույն Պայմանագրին համապատասխան մատուցված Ծառայությունները, իսկ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին սույն Պայմանագրով սահմանված կարգով և ժամկետում գրավոր հայտնել Կատարողին,

2.2.3. Վճարել Կատարողին մատուցված Ծառայությունների համար սույն Պայմանագրով սահմանված չափով, կարգով և ժամկետում:

2.3. Կատարողն իրավունք ունի՝

2.3.1. Սույն Պայմանագրով սահմանված Ծառայությունների մատուցման նպատակով Պատվիրատուից պահանջել ապահովել սույն Պայմանագրի 2.2.1. կետով սահմանված պայմանները,

2.3.2. Պատվիրատուից պահանջել սույն Պայմանագրով սահմանված կարգով և ժամկետում ընդունել պատշաճ մատուցված Ծառայությունները,

2.3.3. Պատվիրատուից պահանջել վճարել պատշաճ մատուցված Ծառայությունների համար սույն Պայմանագրով սահմանված չափով և ժամկետում:

2.4. Կատարողը պարտավոր է՝

2.4.1. Ծառայությունները մատուցել ամբողջությամբ և պատշաճ որակով, Պայմանագրով նախատեսված ժամկետներում, պահպանելով ՀՀ օրենսդրությամբ սահմանված կիրառելի նորմերի, կանոնների և ստանդարտների պահանջները,

2.4.2. Ծառայությունները մատուցել անձամբ, սեփական ուժերով և միջոցներով: Ծառայությունների մատուցմանը Կատարողի կողմից երրորդ անձանց ներգրավելը հնարավոր է միայն Պատվիրատուի նախնական գրավոր համաձայնությամբ,

2.4.3. Տպագրել բրենդավորման պաստառները Հավելված 1-ով նախատեսված քանակին, ինչպես նաև նյութերին համապատասխան, որոնց որակական հատկանիշները կհամապատասխանեն կիրառելի ստանդարտներին և կապահովվեն Պայմանագրի գործողության ողջ ընթացքում դրանց պատշաճ տեսքը,

2.4.4. «Մանկական Եվրատեսիլ 2022» երգի միջազգային մրցույթի անցկացման կապակցությամբ մրցույթի անցկացման հետ կապված լրացուցիչ պարտավորությունների սահմանելու դեպքում առանց լրացուցիչ համաձայնություն տրամադրելու այդ բոլոր պարտավորությունները ստանձնել այն նույն ծավալով, որ ծավալով կսահմանվեն Պատվիրատուի համար, պայմանով, որ դրանք լինեն ողջամիտ, չառաջացնեն լրացուցիչ ֆինանսական ծախսեր Կատարողի համար և վերաբերեն սույն Պայմանագրով Կատարողի ստանձնած պարտավորություններին: Լրացուցիչ պարտավորությունների մասին Պատվիրատուն

պարտավորվում է Կատարողին ծանուցել անհապաղ, որոնք ուժի մեջ են մտնում Կատարողի համար դրանց մասին ծանուցվելու պահից, եթե այլ բան չի բխում տվյալ ծանուցումներից:

2.4.5. Ծառայությունների մատուցման ողջ ընթացքում պահպանել և հետևել, Ծառայությունների մատուցման տարածքում գործող, ինչպես նաև Պատվիրատուի և «Եվրոպայի հեռարձակողների միության» կողմից սահմանված անվտանգության կանոններին,

2.4.6. Ինչպես սոցիալական մեդիա հարթակներում իր պաշտոնական էջերի միջոցով, այնպես էլ որևէ այլ հարթակներում առանց Պատվիրատուի նախնական գրավոր համաձայնության չտարածել որևէ տեղեկատվություն սույն Պայմանագրով մատուցվող Ծառայությունների վերաբերյալ, ներառյալ՝ բրենդավորման, դրա տեսքի, մտահաղացման վերաբերյալ կամ որևէ այլ հանգամանքի վերաբերյալ, ինչպես նաև երաշխավորել Ծառայությունների մատուցման գործընթացում աշխատանքային, ծառայությունների մատուցման կամ որևէ այլ պայմանագրի հիման վրա ներգրավված անձանց կողմից այդպիսի տեղեկատվության գաղտնիության պահպանումը,

2.4.7. Աջակցել Պատվիրատուին Ծառայությունների մատուցման ընթացքը և որակը ստուգելիս, ինչպես նաև մատուցված Ծառայությունների արդյունքն ընդունելիս, սույն Պայմանագրի 2.1.2. կետով սահմանված կարգով Պատվիրատուի համապատասխան պահանջը ստանալուց 1 (մեկ) աշխատանքային ժամվա ընթացքում Պատվիրատուին տրամադրել Ծառայությունների մատուցման ընթացքի և որակի, ինչպես նաև մատուցված Ծառայությունների արդյունքի վերաբերյալ Պատվիրատուին հետաքրքրող տեղեկատվությունը,

2.4.8. Հետևել սույն Պայմանագրի պայմանների սահմաններում Պատվիրատուի տված վերաբերելի ողջամիտ ցուցումներին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՐԺԵՔԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1. Սույն Պայմանագրով նախատեսված Ծառայությունների ընդհանուր արժեքը կազմում է 31 664 400 (երեսունմեկ միլիոն վեց հարյուր վաթսունչորս հազար չորս հարյուր) ՀՀ դրամ (ներառյալ բոլոր կիրառելի հարկերը, ինչպես նաև Կատարողի կողմից իրականացվող ծախսերը) որից.

3.1.1. բրենդավորման տպագրության, տեղադրման և ապամոնտաժման արժեքը կազմում է 26 384 400 (քսանվեց միլիոն երեք հարյուր ութսունչորս հազար չորս հարյուր) ՀՀ դրամ՝ համաձայն Հավելված 1-ով սահմանված նախահաշվի,

3.1.2. բրենդավորման (մտահաղացման) արժեքը՝ 5 280 000 (հինգ միլիոն երկու հարյուր ութսուն հազար) ՀՀ դրամ:

3.2. Պատվիրատուն մատուցված Ծառայությունների դիմաց վճարումն իրականացնում է հետևյալ կարգով.

3.2.1. Պայմանագրի ընդհանուր արժեքի 60%-ը որպես կանխավճար՝ մինչև 2022 թվականի նոյեմբերի 30-ը ներառյալ;

3.2.2. Պայմանագրի ընդհանուր արժեքի մնացած մասը՝ հանձնման-ընդունման ակտի և հաշիվ-վավերագրի երկկողմանի հաստատվելուց հետո 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում:

3.3. Սույն Պայմանագրով վճարումն իրականացվում է անկանխիկ եղանակով՝ դրամական միջոցները Կատարողի բանկային հաշվեհամարին փոխանցելու միջոցով:

3.4. Վճարման ամսաթիվ է համարվում Պատվիրատուի բանկային հաշվից դրամական միջոցների ելքագրման ամսաթիվը: Բանկային ծախսերը Պատվիրատուի բանկում կատարում է Պատվիրատուն, իսկ Կատարողի բանկում՝ Կատարողը:

4. ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՆՁՆՈՒՄ-ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

4.1. Սույն Պայմանագրով սահմանված Ծառայությունները մատուցելուց հետո 10 (տաս) աշխատանքային օրվա ընթացքում Կատարողը Պատվիրատուին է ներկայացնում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման ակտը և հաշիվ-վավերագիրը:

4.2. Ծառայությունների հանձնումն արձանագրող հանձնման-ընդունման ակտի հետ միաժամանակ Կատարողը պարտավոր է Պատվիրատուին ներկայացնել սույն Պայմանագրի Հավելված 1-ով նախատեսված նախահաշվում նշված ծախսերի փաստացի կատարումը հիմնավորող պատշաճ փաստաթղթեր: Սույն կետով սահմանված կարգով փաստաթղթերի ներկայացման հետ միաժամանակ Կատարողը Պատվիրատուին է

տրամադրում սույն Պայմանագրի Հավելված 3-ում նշված ձևով լրացված հաշվետվությունը: Ընդ որում սույն կետով սահմանված կարգով ներկայացված փաստաթղթերը պետք է համապատասխանեն Հարկային օրենսգրքի 55-րդ հոդվածի պահանջներին: Փաստաթղթերի՝ սույն կետով սահմանված պատշաճությունը և հիմնավորվածությունը որոշում/գնահատում է Պատվիրատուն՝ դրանք ներկայացնելուց հետո՝ 10 (տասը) աշխատանքային օրվա ընթացքում:

4.3. Եթե Պայմանագրի 4.2. կետերով սահմանված դեպքերում Կատարողը Պատվիրատուին է տրամադրում փաստաթղթերի լուսապատճենները Կողմերի՝ սույն Պայմանագրի կատարման համար պատասխանատու ներկայացուցիչների միջև համաձայնեցված կարգով: Ներկայացված փաստաթղթերի՝ Պատվիրատուի կողմից հավաստիության՝ պատշաճության և հիմնավորվածության գնահատման ընթացքում Պատվիրատուն իրավունք ունի նաև պահանջել ներկայացնել փաստաթղթերի բնօրինակները, որոնք Պատվիրատուի կողմից դիտարկվելուց հետո վերադարձվում են Կատարողին:

4.4. Պայմանագրի 4.1. կետով նախատեսված հանձնման-ընդունման ակտը Պատվիրատուն պարտավորվում է հաստատել 4.2. կետով սահմանված փաստաթղթերը հաստատելուց հետո՝ 10 (տասը) աշխատանքային օրվա ընթացքում: Այն դեպքում, եթե Պատվիրատուն չի հաստատում հանձնման-ընդունման ակտը սույն կետով սահմանված ժամկետում և Կատարողին չի ներկայացնում դրա հիմնավորումը, ապա Պատվիրատուն կրում է պարտավորություն սույն կետով նախատեսված ժամկետին հաջորդող առաջին իսկ աշխատանքային օրը հաստատելու Կատարողի կողմից ներկայացված հանձնման-ընդունման ակտը և հաշիվ-վավերագիրը/հարկային հաշիվը ու Պայմանագրի 3.2. կետով սահմանված ժամկետում վճարելու դրանով նախատեսված գումարը:

4.5. Սույն Պայմանագրի 4.2. կետով նախատեսված փաստաթղթերը, հաշվետվությունը չներկայացնելու կամ թերի (ոչ պատշաճ, ոչ հիմնավոր) ներկայացնելու դեպքում Կատարողը Պատվիրատուի կողմից չհիմնավորված ծախսերի մասին տեղեկանալուց հետո 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնում է համապատասխան ծախսերի կատարումը հիմնավորող փաստաթղթերը: Պայմանագրի 4.2. և սույն կետով նախատեսված պայմանները Կատարողի կողմից չպահպանելու պարագայում Պատվիրատուն չի վճարում հանձնման-ընդունման ակտով՝ Հավելված 1-ով նախատեսված Ծառայությունների համար նախատեսված գումարը, այն մասով որով չի ներկայացվել կամ թերի է ներկայացվել համապատասխան ծախսի կատարումը. Պատվիրատուի կողմից համապատասխան ծախսը կհամարվի չհիմնավորված, և Պատվիրատուն նման դեպքերում վճարման պարտավորություն կկրի միայն 3.1.2. կետով նախատեսված՝ բրենդավորման արժեքը վճարելու համար: Իսկ եթե ոչ հիմնավոր ծախսը գումարային արտահայտությամբ մեծ է Կատարողին վճարման ենթակա գումարից, ապա Կատարողը պարտավոր կլինի Պատվիրատուին վերադարձնել ստացված գումարների այն մասը, որը գերազանցում է չվճարված մասին՝ համապատասխան պահանջը ներկայացնելու օրվանից 15 (տասնհինգ) օրվա ընթացքում:

4.6. Կողմերն արձանագրում են, որ այն պարագայում, երբ Կատարող ընկերությունը ՀՀ օրենսդրության համաձայն հանդիսանում է ԱԱՀ վճարող ընկերություն, Պայմանագրի Հավելված 3-ով սահմանված փաստացի ծախսերը հիմնավորող հաշվետվությունները Կատարողի կողմից Պատվիրատուին ներկայացնելիս վերջինիս կողմից հաշվի է առնվում այն, որ Պայմանագրի արժեքի շրջանակներում հաշվարկված ԱԱՀ-ն չի կարող ուղղվել, այդ թվում նաև հաշվանցվել՝ Կատարողի կողմից սույն Պայմանագրի շրջանակներից դուրս իրականացվող գործունեության նպատակով: ԱԱՀ-ի գծով լրացուցիչ հատկացումները որպես հարկային պարտավորություն ենթակա են վճարման Կատարողի կողմից որպես ԱԱՀ, հակառակ դեպքում, ենթակա են վերադարձման Պատվիրատուին:

4.7. Կողմերն արձանագրում են, որ բոլոր այն դեպքերում, երբ սույն Պայմանագրի 4.2 կետի հիման վրա Կատարողը որպես ծախսերի կատարումը հիմնավորող փաստաթուղթ ներկայացնում է հսկիչ դրամարկղային կտրոն կամ միակողմանի գնման ակտ, որոնցում չի ներառվում գնորդի ՀՎՀՀ-ն, գնման առարկան, քանակը, ԱՏԳԱԱ կոդը կամ գնումը (ապրանքների կամ ծառայությունների) նույնականացնող այլ տվյալներ, Կատարողը պարտավորվում է ներկայացնել իր կողմից հաստատված գնման մանրամասներին վերաբերող բացվածք, որի հավաստիության համար պատասխանատվություն է կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1. Կողմերը պատասխանատվություն են կրում սույն Պայմանագրով ստանձնած պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար:

5.2. Կատարողի կողմից Ծառայությունները այնպիսի թերություններով մատուցելու դեպքում, որոնք Պատվիրատուն կարող էր հայտնաբերել հանձնման-ընդունման ակտի հաստատման ընթացքում, Կատարողը պարտավոր է Պատվիրատուին հատուցել այդպիսի թերությունների հետևանքով Պատվիրատուին պատճառված վնասները:

5.3. Կատարողը պատասխանատվություն է Ծառայությունների ոչ պատշաճ մատուցման համար Պայմանագրի ընդհանուր արժեքի 10 (տաս) տոկոսի չափով:

5.4. Մատուցված Ծառայությունների դիմաց վճարելու Պայմանագրով սահմանված ժամկետը խախտելու դեպքում Կատարողն իրավունք ունի Պատվիրատուից գանձել տույժ՝ կետանցի յուրաքանչյուր օրվա համար վճարման ենթակա գումարի 0,1 (զրո ամբողջ մեկ տասնորդական) տոկոսի չափով, բայց ոչ ավել, քան վճարման ենթակա գումարի 5 (հինգ) տոկոսը:

5.5. Սույն Պայմանագրով սահմանված պատասխանատվության միջոցների կիրառումը Կողմերին չի ազատում սույն Պայմանագրով ստանձնած պարտավորությունների ամբողջական կատարումից, եթե այլ բան նախատեսված չէ ՀՀ օրենսդրությամբ:

5.6. Սույն Պայմանագրով չնախատեսված դեպքերում Կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6. ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ

6.1. Սույն Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն Պայմանագիրը ստորագրելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն Պայմանագրով պարտավորությունների կատարումը:

6.2. Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 1 (մեկ) ամսից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու Պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս Կողմին:

7. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

7.1. Սույն Պայմանագիրն ուժի մեջ է մտնում երկկողմանի ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի համար սույն Պայմանագրով նախատեսված պարտավորությունների ամբողջական և պատշաճ կատարումը:

7.2. Առկայության դեպքում, սույն Պայմանագրի Հավելված 1-ով նախատեսված հիմնական միջոցները, որոնք ձեռք են բերվում Կատարողի կողմից սույն Պայմանագրով նախատեսված Ծառայությունների մատուցման համար, անցնում են Պատվիրատուի սեփականությանը՝ սույն Պայմանագրով նախատեսված Ծառայությունների մատուցման ավարտին Կողմերի միջև ստորագրվող հանձնման-ընդունման ակտի հիման վրա:

7.3. Սույն Պայմանագիրը ստորագրող Կողմերի ներկայացուցիչները սույնով հաստատում են, որ ունեն բոլոր անհրաժեշտ լիազորությունները ստորագրելու սույն Պայմանագիրը և ներկայացնելու Կողմերին Պայմանագրով նախատեսված հարաբերություններում:

7.4. Առկայության դեպքում, սույն Պայմանագրի Հավելված 1-ով նախատեսված հիմնական միջոցները, որոնք ձեռք են բերվում Կատարողի կողմից սույն Պայմանագրով նախատեսված Ծառայությունների մատուցման համար, անցնում են Պատվիրատուի սեփականությանը՝ սույն Պայմանագրով նախատեսված

Ծառայությունների մատուցման ավարտին Կողմերի միջև ստորագրվող հանձնման-ընդունման ակտի հիման վրա:

7.5. Կողմերից որևէ մեկն իրավունք չունի սույն Պայմանագրով սահմանված իր իրավունքներն ու պարտականությունները փոխանցելու երրորդ անձի՝ առանց մյուս Կողմի գրավոր համաձայնության:

7.6. Կողմի՝ սույն Պայմանագրով սահմանված իրավունքին համապատասխանում է մյուս Կողմի պարտավորությունը ապահովել տվյալ իրավունքի իրացումը:

7.7. Սույն Պայմանագրի յուրաքանչյուր կետ կամ պայման իրենից ներկայացնում է առանձին և ինքնուրույն դրույթ: Եթե Պայմանագրի որևէ դրույթ դատական կարգով կամ այլ իրավասու մարմնի որոշմամբ ճանաչվի անվավեր կամ կատարման ոչ ենթակա, ապա սույն Պայմանագրի մնացած բոլոր դրույթները կպահպանեն իրենց ուժը, բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերի:

7.8. Պայմանագրի Հավելվածները հանդիսանում են դրա անբաժանելի մասը:

7.9. Սույն Պայմանագրում ցանկացած փոփոխություն և լրացում վավեր է, եթե այն կատարված է գրավոր և ստորագրված՝ Կողմերի լիազոր ներկայացուցիչների կողմից:

7.10. Սույն Պայմանագիրը կարող է վաղաժամկետ լուծվել Պայմանագրով, ՀՀ օրենսդրությամբ նախատեսված կարգով և հիմքերով, ինչպես նաև Կողմերի փոխադարձ համաձայնությամբ: Պայմանագրի վաղաժամկետ լուծման հետևանքները կարգավորվում են Պայմանագրով, ՀՀ օրենսդրությամբ՝ կախված այդպիսի լուծման շարժառիթ հանդիսացած հանգամանքներից:

7.11. Սույն Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Բանակցությունների արդյունքում համաձայնություն ձեռք չբերվելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

7.12. Սույն Պայմանագրի շրջանակներում Կողմերի միջև փաստաթղթերի, ծանուցումների առաքումը, տեղեկությունների փոխանակությունն իրականացվում է գրավոր կերպով՝ սույն Պայմանագրի վավերապայմաններում նշված ծանուցման հասցեներով փոստային առաքմամբ կամ առձեռն հանձնելու միջոցով, կամ Կողմերի համաձայնությամբ նախատեսված այլ եղանակներով:

7.13. Սույն Պայմանագրի կատարման ընթացքում Կողմերից յուրաքանչյուրի անվանման, հասցեի, վճարման կամ այլ վավերապայմանների փոփոխության դեպքում, համապատասխան Կողմը պարտավոր է այդ մասին պատշաճ կերպով գրավոր ծանուցել մյուս Կողմին՝ այդպիսի փոփոխությունից 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում, հակառակ դեպքում՝ նախկինում տրամադրված վավերապայմաններով արված վճարումները, ուղարկված ծանուցումները համապատասխանաբար կհամարվեն ժամանակին կատարված կամ պատշաճ հասցեով ուղարկված:

7.14. Սույն Պայմանագրի առարկային վերաբերող և սույն Պայմանագրով ուղղակիորեն չկարգավորված բոլոր հարաբերությունները կարգավորվում են ՀՀ օրենսդրությամբ:

7.15. Սույն Պայմանագիրը կազմված է հայերեն լեզվով, երկու հավասարազոր օրինակներից: Յուրաքանչյուր Կողմին տրվում է Պայմանագրի մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԻ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պատվիրատու **«Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ**	**Կատարող** **«Բեգրաունդ փրոդաքշն» ՍՊԸ**
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Գ. Հովսեփյան 26 ՀՎՀՀ՝ 01540062 «Ինեկոբանկ» ՓԲԸ Հ/Հ՝ 2050022082671001	Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Անտառային փ. 160/14 8 ՀՎՀՀ՝ 02676654 «Էվոկաբանկ» ՓԲԸ Հ/Հ՝ 16600559951800
Հ. Մովսիսյան *Գործադիր տնօրեն*	**Վ. Պողոսյան** *Տնօրեն*

Հավելված 1

16 նոյեմբերի 2022թ.-ին ստորագրված

թիվ ՀՀՀ-ՄԱԾՁԲ-22/80-Պ պայմանագրի

ՄՀՀ արտաքին և ներքին բրենդավորման, տպագրության, տեղադրման և ապամոնտաժման աշխատանքների կատարման գնացուցակի բացվածք

Հ/Հ	Նկարագրություն	Նյութ	Ք-կ	Հատի գին՝ ՀՀ դրամով (առանց ԱԱՀ)	Ընդհանուր գին՝ ՀՀ դրամով (առանց ԱԱՀ)
1.	ՄՀՀ – ի ֆասադային հատվածի բրենդինգ /տեղադրում և ապատեղադրում /2-րդ հարկ/	Սև հետևով բաններ	2	685,000	1,370,000
2.	ՄՀՀ – ի ֆասադային հատվածի բրենդինգ /տեղադրում և ապատեղադրում /5-րդ հարկ/	Սև հետևով բաններ	1	857,000	857,000
3.	Երկկողմանի բաններների տեղադրում և ապատեղադրում ՄՀՀ – ի ամբողջ շրջակայքով	Սև հետևով բաններ	31	13,000	403,000
4.	Երկկողմանի բաններների տեղադրում և ապատեղադրում ՄՀՀ –ի դրսի աստիճանների աջ և ձախ հատվածներում	Բլոքաուտ բաններ	30	75,500	2,265,000
5.	ՄՀՀ-ի մուտքի բաններների տեղադրում և ապատեղադրում	Սև հետևով բաններ	2	145,200	290,400
6.	Գլխավոր մուտքի ապակիների բրենդինգ /տեղադրում և ապատեղադրում/	Ինքնակպչուն թաղանք սև հետևով	90	13,800	1,242,000
7.	Գլխավոր մուտքի դռների ապակիների վրա վահանակների /տեղադրում և ապատեղադրում/	8 մմ ՊՎՔ	3	27,000	81,000
8.	ՄՀՀ-ի ներքևի կրպակի բրենդինգ /տեղադրում և ապատեղադրում/	Բաններ	1	386,000	386,000
9.	ՄՀՀ-ի կողքի մուտքի կամարի բրենդինգ /տեղադրում և ապատեղադրում/	Բաններ	1	99,600	99,600
10.	ՄՀՀ-ի կողքի մուտքի պարկինգի բրենդինգ /տեղադրում և ապատեղադրում/	Բաններ	1	79,000	79,000
11.	Գլխավոր մուտքի հատակի վրա ուղղորդիչների /տեղադրում և ապատեղադրում/	Ինքնակպչուն թաղանք լամինացայով	2	88,000	176,000

12.	Գլխավոր մուտքի ֆոյեյում լուսավորվող երկկողմանի վահանակների /ձողի վրա/ /տեղադրում և ապատեղադրում/	Օրգանական ապակի + ԼԵԴ լույսեր	2	268,000	536,000
13.	Գլխավոր մուտքի ցուցանակներ հանդերձասրահների վերևի մասում /տեղադրում և ապատեղադրում	Փրփրաստվարաթուղթ 5մմ	2	25,300	50,600
14.	Ֆոյեյի վերևի հատվածի բրենդինգ /տեղադրում և ապատեղադրում/	Փրփրաստվարաթուղթ 5մմ	1	878,000	878,000
15.	Գլխավոր մուտքի ներսի դռների վերևում ելքի ցուցանակների /տեղադրում և ապատեղադրում/	ՊՎՔ 3մմ	3	12,000	36,000
16.	Ֆոյեյի էսկալատորների դրսի կողքերի բրենդինգ /տեղադրում և ապատեղադրում /	Ինքնակպչուն թաղանք սև հետևով	4	86,600	346,400
17.	Բուֆետի բրենդինգ /տեղադրում և ապատեղադրում/	Ինքնակպչուն թաղանք	1	187,000	187,000
18.	Բուֆետի լուսավորվող վահանակների բրենդինգ /տեղադրում և ապատեղադրում/	Բաններ	4	19,500	78,000
19.	Բուֆետի սյուների բրենդինգ /տեղադրում և ապատեղադրում/	8 մմ ՊՎՔ	7	86,600	606,200
20.	Ֆոյեյի ձախ բուֆետի սեղանները դեպի դահլիճ փակել վահանակներով /տեղադրում և ապատեղադրում/	Մետաղական կարկաս + բաներ + ՊՎՔ3մմ + ԼԵԴ լույս	1	1,273,600	1,273,600
21.	Ֆոյեյի աջ և ձախ հատվածի բրենդինգ /տեղադրում և ապատեղադրում/	Փրփրաստվարաթուղթ 5մմ	4	213,000	852,000
22.	Ֆոյեյի աջ և ձախ հատվածի /վերևի/ բրենդինգ /տեղադրում և ապատեղադրում/	Փրփրաստվարաթուղթ 5մմ	4	478,000	1,912,000
23.	**Press Conference Hall** – ի դռան դիմացի հատվացի փակումը վահանակներով /տեղադրում և ապատեղադրում/	Մետաղական կարկաս + բաներ	1	443,000	443,000
24.	**Press Conference Hall** – ի դռան շրջանակի բրենդինգ /տեղադրում և ապատեղադրում/	ՊՎՔ 3մմ	1	177,000	177,000
25.	**Press Conference Hall** – ի **press wall** –ի պատրաստում և տեղադրում / ապատեղադրում	Մետաղական կարկաս + բաներ + ՊՎՔ3մմ + ԼԵԴ լույս	1	401,300	401,300

26.	**Press Conference Hall –** ի աջ և ձախ պատերի ձևավորումը վարագույրներով և վահանակներով /տեղադրում /ապատեղադրում	Տպագրված վարագույրներ + մետաղական կարկաս + բաներ	1	1,300,600	1,300,600
27.	**Press Conference Hall –** ի աջ և ձախ կողմի անկյունաձև պատերի ձևավորումը վահանակներով / տեղադրում / ապատեղադրում/	Մետաղական կարկաս + բաներ	4	177,600	710,400
28.	**Press Centre –** ի press wall հիշեցնող ամբողջ դիմային հատվածի ձևավորում վահանակներով /տեղադրում և ապատեղադրում/	Մետաղական կարկաս + բաներ	1	389,000	389,000
29.	**Press Centre –** ի աջ և ձախ կողմի վարագույրների վրա լոգոների պատրաստում և տեղադրում / ապատեղադրում	Փրփրաստվարաթուղթ 5մմ	7	12 500	87,500
30.	**Press Centre –** ի ետնամասի վարագույրի վրա լուսավորվող լոգոյի պատրաստում և տեղադրում / ապատեղադրում	Օրգանական ապակի + ԼԵԴ լույսեր	1	120,000	120,000
31.	**Press Centre –** ի ետնամասում վարագույրի կողքից վահանակների պատրաստում և տեղադրում / ապատեղադրում	Մետաղական կարկաս + բաներ	2	83,200	166,400
32.	**Press Centre –** ի դռան դռսի հատվածում պաստառի տեղադրում / ապատեղադրում	Ինքնակպչուն թաղանք	1	14,200	14,200
33.	Աշխատասենյակների վրա փակցվող անվանատախտակներ	ՊՎՔ 3մմ	30	1,800	54,000
34.	Ծառայողական մուտքի բրենդավորում տեղադրումով / ապատեղադրում	Ինքնակպչուն թաղանք	1	23,400	23,400
35.	Ծառայողական մուտքի դիմացի անվտանգության սենյակի բրենդավորում տեղադրումով / ապատեղադրում	Ինքնակպչուն թաղանք	1	48,600	48,600
36.	Ծառայողական մուտքի դիմացի աջ հատվածի անվտանգության սենյակի բրենդավորում տեղադրումով / ապատեղադրում	Ինքնակպչուն թաղանք	1	56,900	56,900
37.	Անվտանգության սեղանի բրենդավորում տեղադրումով / ապատեղադրում	Ինքնակպչուն թաղանք	1	22,200	22,200
38.	Վահանակի պատրաստում և տեղադրում /ապատեղադրում	Մետաղական կարկաս + բաներ	1	83,200	83,200

39.	Գլխավոր մուտքի ներսի հատվածում գտնվող անվտանգուտյան ապակեպատ բոքսի բրենդավորում տեղադրումով / ապատեղադրում	Օրակալ	1	220,000	220,000
	Ընդհանուր՝ առանց հարկերի				18,322,500
				ԱԱՀ ***20%***	*3,664,500*
	Ընդհանուր՝ հարկերով				**21 987 000**

Պատվիրատու
«Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Գ. Հովսեփյան 26
ՀՎՀՀ՝ 01540062
«Ինեկոբանկ» ՓԲԸ
Հ/Հ՝ 2050022082671001

Հ. Մովսիսյան
Գործադիր տնօրեն

Կատարող
«Բեգրաունդ փրոդաքշն» ՍՊԸ

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Անտառային փ. 160/14 8
ՀՎՀՀ՝ 02676654
«Էվոկաբանկ» ՓԲԸ
Հ/Հ՝ 16600559951800

Վ. Պողոսյան
Տնօրեն

Հավելված 2
16 նոյեմբերի 2022թ.-ին ստորագրված
թիվ ՀՀՀ-ՄԱԾՁԲ-22/80-Պ պայմանագրի

Բրենդավորում

(էսքիզների ամբողջական տարբերակը՝ Պայմանագրին կից)





Հավելված 3

16 նոյեմբերի 2022թ.-ին ստորագրված

թիվ ՀՀՀ-ՄԱԾՁԲ-22/80-Պ պայմանագրի

«.....» Ընկերության թիվ ՀՀՀ-ՄԱԾՁԲ-22/80-Պ պայմանագրի շրջանակներում
ՄՀՀ արտաքին և ներքին բրենդավորման, տպագրության, տեղադրման և ապամոնտաժման աշխատանքների կատարման

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

N	Անվանումը	չափման միավոր	Պայմանագրին կից նախահաշիվ			Փաստացի կատարողական			Հիմնավորող փաստաթղթի նկարագրություն
			Քանակը	Միավորի արժեքը, ներառյալ հարկերը, ՀՀ դրամ	Ընդամենը նախահաշվային գումարը, ներառյալ հարկերը, ՀՀ դրամ	Քանակը	Միավորի փաստացի արժեքը, ներառյալ հարկերը ՀՀ դրամ	Ընդամենը փաստացի գումարը, ներառյալ հարկերը, ՀՀ դրամ	
Անձնակազմի վարձատրության ծախսեր									
1									
2									
. .									
	ԸՆԴԱՄԵՆԸ								
Վարձակալական ծախսեր									
1									
2									
. .									
	ԸՆԴԱՄԵՆԸ								
Նկարահանումների կազմակերպման այլ անհրաժեշտ ծախսեր									
1									
2									
. .									
	ԸՆԴԱՄԵՆԸ								
Այլ չնախատեսված ծախսեր									
1									
2									
. .									

	ԸՆԴԱՄԵՆԸ								

	ԸՆԴԱՄԵՆԸ							
	Շահույթ							
	ԸՆԴԱՄԵՆԸ							
	Շրջանառության հարկ							
	ԸՆԴԱՄԵՆԸ							

Կատարող

« »
Հասցե՝
ՀՎՀՀ՝
Բանկ
Հ/Հ՝

Տնօրեն

_____
Կ.Տ

Պատվիրատու
«Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Գ. Հովսեփյան 26
ՀՎՀՀ՝ 01540062
«Ինեկոբանկ» ՓԲԸ
Հ/Հ՝ 2050022082671001

Հ. Մովսիսյան
Գործադիր տնօրեն

Կատարող
«Բեգրաունդ փրոդաքշն» ՍՊԸ

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Անտառային փ. 160/14 8
ՀՎՀՀ՝ 02676654
«Էվոկաբանկ» ՓԲԸ
Հ/Հ՝ 16600559951800

Վ. Պողոսյան
Տնօրեն

"BACKGROUND PRODYCTION" LLC
02676654
BACKGROUND Production
02676654
«ԲԵԳՐԱՈՒՆԴ ՓՐՈԴԱՔՇՆ» ՍՊԸ

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՀԵՌՈՒՍՏԱՏԵԼԵՏԵՍԻԱ ՓԱԿ ԱԲԱ "ОБЩЕСТВЕННАЯ ТЕЛЕКОМПАНИЯ АРМЕНИИ" ОАО • РА Г. ЕРЕВАН 3 • 01540062 • PA C. YEREVAN C.J.S.C. "PUBLIC TELEVISION COMPANY OF ARMENIA"

Junior Eurovision

SONG CONTEST

YEREVAN 2022

INTERIOR x EXTERIOR


Junior
Eurovision
SPIN
THE MAGIC
Junior
Eurovision
SPIN
THE MAGIC
Junior
Eurovision


Junior Eurovision
SPIN THE MAGIC

LE


Junior
EUROVISION
SONG CONTEST
YEREVAN 2022

Junior
EUROVISION
SONG CONTEST
YEREVAN 2002
SPIN
MAGIC

Junior
EUROVISION
SONG CONTEST
Feathe

Banners On Stre

(Booth

PRESS
AREA
Junior
Eurovision


Junior
EUROVISION
SONG CONTEST
YEREVAN 2022
SPIN
THE MAGIC

Junior
EUROVIS
SONG CONT
YEREVAN 20
SPIN
THE MA



ty Area)

(Security Entrance Door

(Main



(Main

Or


Junior
Eurovision
MAIN STAGE
WC
MAIN STAGE
WC

MAIN STAGE
WC
WC
CAFÉ
FITTING ROOM

(Mai


Junior
EUROVISION
SONG CONTEST
SPIN
THE MAGIC
Junior
EUROVISION
SONG CONTEST

(Mai



(Mai

Junior
EUROVISI
SONG CONTE
YEREVAN 2022


Junior
EUROVISION
SONG CONTEST
SPIN
THE MAGIC
ITTING ROOM 0

Junior
EUROVISION
SONG CONTEST
YEREVAN 2022

CAFÉ
Junior Eurovision
SPIN the MAGIC
ՍՐՃԱՐԱՆ

CAFÉ
Junior Eurovision
ՍՐՃԱՐԱՆ

SPIN THE MAG

(E


SPIN THE MAG


Junior
EUROVISION
SONG CONTEST

(Closed



(Closed

LED M

CONFERENCE HALL
Junior
EUROVISION
SONG CONTEST
EBU
EBU
EBU
EBU


Junior Eurovision
SONG CONTEST
SPIN THE MAGIC
EBU
FLYONE
Telcell


Junior Eurovision
SONG CONTEST
SPIN THE MAGIC
EBU
FLYONE
Telcell

Junior
EUROVISION
SONG CONTEST
YEREVAN 2022
SPIN
THE MAGIC

Junior
EUROVISION
SONG CONTEST
SPIN
THE MAGIC

Conference Hall Banners)

(Backside Banners)

Junior Eurovision
Junior Eurovision
Junior Eurovision
Junior Eurovision
Junior Eurovision



PVC Circ

Banner

Junior
Eurovision
SPIN
MAGIC

FIRST
CHANNEL


VIEWING ROOM

EBU


PRODUCTION
ROOM

BACKGROUND

Production

Thank you!